

«Պատմագետը նա չէ, ով գիտի,
պատմագետը նա է, ով որոնում է»¹:

Լյուսիեն Ֆևր

ԱՐՑԱԽԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ*

Բանալի բառեր – Արցախ, նոր կարգ, երկդիմի Յանուս, պատանդ, ուրիշի խումհար, գայլ, ոչխար, խոտ, կաուֆմանյան բնորդ, Հայկական հարց, սահմանադրական փոփոխություններ:

Մեզանում այսօր քչերն են խոստովանում, որ 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով մեր հայրենիքի արցախյան հատվածը դարձել է տարածաշրջանում ու նրա շուրջը ծավալվող աշխարհաքաղաքական խաղերի **պատանդը**, ուստիև առայժմ չունենք մեկ քայլով իրավիճակը շտկելու և անգամ դրա երկարատև սառեցմանը հասնելու որևէ հնարավորություն կամ երաշխիք:

Պատճառն այն է, որ 44-օրյա պատերազմով սկիզբ առած և 2022 թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում շարունակված զարգացումները դեռևս չեն հասել իրենց անդամալիության կետին, ուստի այն **նոր կարգը**, որը պետք է փոխարինի ներկա անորոշություններին, առայժմ **երկդիմի Յանուս** է հիշեցնում: Նրա մի երեսին ծավալվում են Ռուսաստանի շուրջ նոր ինտեգրացիոն միավորում ստեղծելու, իսկ մյուսին՝ հետխորհրդային երկրների սուվերենությունն ամրապնդելու փորձերը: Որպես հետխորհրդային հակամարտության գոտի՝ Արցախը 2020 թ. դարձավ այս երկու միտումների ընդհանուր թիրախը և ընկավ **խաչաձև կրակի** տակ: Ռուսաստանի համար այն խոչընդոտ էր դեպի Ադրբեջան ու Թուրքիա տանող եվրասիական ու-

¹ Lucien Febvre, Le problème de l'incroyance au XVI^e siècle. La religion de Rabelais, Paris, Éditions Albin Michel, 1942, p. 1.

* Ընդունվել է տպագրության 04.07.2022:

ղիների վրա, իսկ արևմտյան ռազմավարների համար՝ օբյեկտիվորեն Ռուսաստանի ազդեցությունն ամրապնդող հետխորհրդային հակամարտության գոտի: Ուստի գործի դրվեց 20-րդ դարի 20-ական թվականներից մեզ ծանոթ **մուրճի ու սալի** կրկնահարվածը, որը, սակայն, իր գլխավոր նպատակին՝ Զանգեզուրի, տվյալ պարագայում՝ Հայաստանի աշխարհաքաղաքական նշանակության չեզոքացմանը, չհասավ ԱՄՆ-ում տեղի ունեցած իշխանափոխության պատճառով: Ավելին՝ պարզվեց, որ այդ գլխավոր նպատակը պատերազմի ընդհանուր փաթեթի մեջ է խցկվել «տեղական հեղինակությունների» կողմից, որոնց լենին-աթաթուրքյան գործարքի կիսատ մնալու պատճառով մեր հայրենիքի արցախյան հատվածը դարձել է համատեղ ուժերով պատանդառված այն **արքայազնը**, որին այլևս չեն կարող փոխանակել արքայի՝ Հայաստանի **տիտղոսի** հետ:

Հիշեցնենք, որ 1921 թ. գարնան ու աշնան Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով անկախությունից զրկված Հայաստանին 1921 թ. ամռանը Արցախի հարցի հայավնաս լուծումը պարտադրելն առանձնակի ջանք չպահանջեց. անկախությունը և որպես դրա հետևանք՝ սուբյեկտայնությունը կորցնելուց հետո հանձնեցինք նաև Արցախը: Ուրեմն քանի դեռ կա **անկախ Հայաստանը**, մենք չենք պարտվել, իսկ ստեղծված կացության գլխավոր հանելուկը 44-օրյա պատերազմից հետո աստիճանաբար ժամկետանց դարձող ռուս-թուրքական պայմանավորվածությունների հետագա ձակատագրի հարցն է, քանի որ 2020 թ. թուրքին Շուշի բերածներն այսօր իրենք են հայտնվել մեզ համար փորած փոսի մեջ: Մեզանից ոմանք այժմ էլ սպասում են, թե երբ են նրանք դուրս գալու ուկրաինական փոսից, կամ երբ է Թուրքիան ընկնելու սիրիական կամ հունական փոսերի մեջ: Մինչդեռ դատելով ամենից՝ դրանք սովորական փոսեր չեն, այլ արժեքային-քաղաքակրթական **քավարանների** դեր խաղացող աշխարհաքաղաքական ծուղակներ: Դրանց մեջ ընկնողները դատապարտված են որպես **վարչակարգեր**, ուստի մինչև նոր Ռուսաստանի ձևավորումը մեր տարածաշրջանում Թուրքիային զսպողի դերն անցնելու է (եթե արդեն չի անցել) արևմտյան երկրներին: Բայց քանի որ վերջիններիս ընթացիկ քաղաքականությունը կառուցված է տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու նպատակադրման վրա, նորից հայտնվել

ենք 20-րդ դարասկզբի կազուսի առաջ. Ռուսաստանի համար մաշվող գործիք ենք, իսկ Արևմուտքի համար՝ հետխորհրդային առավիզմ:

Ինչպե՞ս դուրս գալ այս եռաշերտ փոս-ծուղակից, երբ մեր հակառակորդ Ադրբեջանը չի ձանաչում Լեռնային Ղարաբաղի գոյությունը և դեռ միջանցք է պահանջում Սյունիքում՝ հիմնվելով 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարագրի կանայական մեկնաբանության վրա: Ավելին՝ Ռուսաստանը պատրաստ է զոհաբերելու նաև Արցախի կարգավիճակի հարցը՝ սեփական զորքերը տարածաշրջանում պահելու համար, իսկ ԱՄՆ-ի համար առաջնահերթը ոչ թե Արցախի կարգավիճակն է, այլ Սյունիքով պայմանավորվող Հայաստանի սուվերենությունը:

Քանի որ չունենք մեկ քայլով իրավիճակը շտկելու և անգամ դրա երկարատև սառեցմանը հասնելու որևէ հնարավորություն, առայժմ ստիպված ենք զբաղվել փոթորկուն գետի վրայով անցնող կամրջով **գայլին, ոչխարին** ու **խոտը** տեղափոխելու հայտնի գլուխկոտրուկի լուծմամբ: **Իրար չուտելու** սկզբունքի վրա կառուցված այդ գլուխկոտրուկի հիմքում գայլի ու խոտի փոխադարձաբար անվնաս լինելու փաստն է: Որքան էլ ամոթալի լինի խոստովանել, մենք այսօր բույսի վիճակում ենք հայտնվել, ուստիև հարևան ոչխարի կերը չդառնալու խնդիրը լուծվում է խաղաղության պահպանման հարցում գայլերի խախուտ կոնսենսուսի միջոցով: Բնականաբար, մինչ այդ որևէ կարգավորում հնարավոր չէ, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո կոլեկտիվ Արևմուտքը **տաբու** է դրել նախկին միութենական հանրապետությունների տարածքներում առկա պետական կազմավորումների ճանաչման հեռանկարի վրա, իսկ Ռուսաստանը չկարգավորված վիճակում է պահել հարցը՝ հետագայում իր վերադարձի հնարավորությունը պահպանելու համար: Եվ քանի դեռ Ռուսաստանում գերակայում է 1994 թվականին Հայաստանին, 2020 թվականին Ադրբեջանին հաղթանակ «պարգևած» կաուֆմանյան² մտածողությունը, իսկ Արևմուտքը չի դադարել նրան իր հիմնական սպառնալիքը դիտելուց, Արցա-

2 **Ֆոն Կաուֆման Կոնստանտին Պետրովիչ** (1818-1882) – ավստրիական արմատներ ունեցող ցարական խորամանկ պաշտոնյա, Թուրքեստանի գեներալ-նահանգապետ, ով այդ երկրամասի գրավման ընթացքում մշակել ու կիրառել է նրանում առկա պետական կազմավորումներին՝ Կոկանդի ու Խիվայի խանություններին ու Բուխարայի էմիրությանը, իրար դեմ հանելու և հերթով գաղութացնելու հիրավի դասական մեթոդներ:

խում ու նրա շուրջը ստեղծված պատային իրավիճակը պահպանվելու է:

Ուստի այն բարդ խաղը, որն այսօր ծավալվում է Ուկրաինայում ու նրա շուրջը, մեզ համար ևս վճռական է լինելու Հարավային Կովկասում առայժմ երկդիմի Յանուսի դեր խաղացող կոլեկտիվ Արևմուտքի ու Ռուսաստանի «միասնականացման» հեռանկարի առումով: Հետխորհրդային տարածքի համար ծավալվող մրցախաղի այս վճռական ռաունդի ժամկետներն ու արդյունքները ճշտելու մեր համառ փորձերը ցույց են տալիս, որ արտաքին սնուցմամբ ծանրքաշայինի վերածված Ուկրաինան պարզապես ծուղակ է Ռուսաստանի ղեկավարության համար. Ուկրաինայում նրան թույլ չեն տալու **ինչպես հարկն է հաղթել**, բայց թույլ չեն տալու նաև **ինչպես հարկն է պարտվել**: Ռուսաստանին դանդաղորեն «քամում են» ու «քամելու են» այնքան ժամանակ, քանի դեռ ծանր ու հյուծիչ պատերազմն իր ազդեցությունը չի ունեցել այդ երկրի տնտեսական ու դրանով պայմանավորվող քաղաքական կացության վրա, և քանի դեռ ՌԴ ներկա վերնախավը կամովին չի ապահովել ստոմային տերության **միջազգայնորեն վտանգավոր** իշխանության խաղաղ փոխանցումը: Դատելով ամենից՝ իրականում այդ վերնախավի խորքային հատվածի և ԱՄՆ-ի միջև նման պայմանավորվածություններ են ձեռք բերվել դեռևս 2020 թ. սկզբներին: Խնդիրը դրանց գործադրման ժամկետների մեջ է, քանի որ Ռուսաստանի ղեկավարության կուտակած շուրջ **երեք տրիլիոն** դոլար ստվերային ֆինանսական ռեսուրսը դեռևս թույլ է տալիս շարունակել մաշող պատերազմը: Ուստի, մեր կարծիքով, եթե առաջիկայում Ուկրաինան օժտվի անհրաժեշտ ռազմատեխնիկական հնարավորություններով, հանգուցալուծումը կնոտենա 2022 թ. աշնան ամիսներին, քանզի ձմռանը կսկսեն սահմանափակվել լիարժեք պատերազմի շարունակման ներքին հնարավորությունները: Միայն դրանից հետո իշխանության խաղաղ փոխանցման գործընթացի մեջ հայտնված Ռուսաստանը Արցախի հարցը կարող է տեղափոխել նրա կարգավիճակի շուրջ Արևմուտքի հետ կոնսենսուս փնտրելու հարթություն: Ուստի մինչ այդ հայ քաղաքական մտքի առջև ծառացած գլխավոր խնդիրը հակամարտող կողմերի վաղվա կոնսենսուսի փաթեթի մեջ Արցախի հարցի կարգավորման հայանպաստ բանաձևի ներդրումն է՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ Ուկրաինայում Ռուսաստանի

կայսերական ապագան խորտակող Արևմուտքը չի պատրաստվում պահպանելու ղարաբաղյան հակամարտության կառավարման **կաուֆմանյան բնորոշը**: Բայց դա ամենևին էլ սարսափելի չէ, քանզի անցած երեսնամյակում միջազգային դիվանագիտությունը մեզ ինքնորոշման իրավունքի իրացման շատ թույլ հույսեր է տվել, անգամ՝ ղարաբաղյան առաջին՝ հաղթական պատերազմից հետո, իսկ վերջին պատերազմում կրած պարտությունը է՛լ ավելի է նվազեցրել նման հնարավորությունը: Գիտակցելով այդ իրողությունը՝ մենք պետք է նոր ելքեր փնտրենք, որովհետև առաջիկա **կես տարվա ընթացքում** Ռուսաստանում և առաջիկա **մեկ տարվա ընթացքում** Թուրքիայում սպասվող ձակատագրական իրադարձությունների հետևանքով ջարդվելու է **Հայկական հարցի** վրա դրված ռուս-թուրքական «կողպեքը», և Արցախի հարցը ինքնաբերաբար դառնալու է վերջինիս բաղկացուցիչը:

Մեզ անում այսօր բոլորը գիտեն, թե ինչ է կատարվել Հայկական հարցի հետ 20-րդ դարի սկզբներին, և, փաստորեն, բոլորն էլ իրենց պատմագետ են երևակայում: Մինչդեռ **իրական պատմագետը նա չէ, ով գիտի, այլ նա, ով որոնում է անցյալի պարտանորհակը վերաբացելու այն հնարավորությունները, որոնք ուրվագծվում են շրջապատող միջավայրի փոփոխության հետևանքով**: Կանգնած լինելով այդ փոփոխության նախաշեմին՝ մենք պետք է ոչ թե անգոր փարվենք ռուս-թուրքական փակուղային ներկային, այլ պատրաստվենք **աշխարհաբաղաբալական ճեղքման**՝ հուսատու ապագային հասնելու համար: Ուստի մինչ այդ անհրաժեշտ է հրնթացս կատարել հետևյալ քայլերը: **Նախ**՝ արագորեն փոփոխվող անվտանգային միջավայրում Հայաստանն անպայման պետք է ունենա այնպիսի նոր գործընկեր(ներ), որոնց և Արցախը պատանդառած Ռուսաստանի ներկա ղեկավարության հարաբերությունները մեկ մակարդակով **ավելի վստահելի կլինեն** Ուկրաինայում ու նրա շուրջը կոլեկտիվ Արևմուտքի և Ռուսաստանի անզիջում պայքարի ընդհանուր տրամաբանությունից: **Երկրորդ**՝ Ռուսաստանում իշխանության փոխանցման պահին Հայաստանն այդ գործընկեր(ներ)ի³ հետ միասին պետք է պատրաստ լինի լիարժեքորեն վերստանձնելու Արցախի անվտանգության

3 Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնի ու նրա շուրջը ձևավորված եվրոպական եռյակի (Ֆրանսիա-Գերմանիա-Իտալիա) պահվածքը հուշում է, որ մենք ունենք նման հնարավորություն:

երաշխավորի գործառույթները, եթե ռուսական կողմն ի վիճակի չլինի կատարելու իր պարտավորությունները: **Երրորդ`** Ռուսաստանում անխուսափելի դարձող ներքաղաքական հստակեցումներից և Արցախի հայության ֆիզիկական գոյության վրա կախված վտանգի չեզոքացումից հետո **սահմանադրական փոփոխությունների** միջոցով Հայաստանը պետք է դառնա Առաջին հանրապետության լիիրավ իրավահաջորդը, ինչն ինքնաբերաբար մեջտեղից կհանի ինքնորոշման իրավունքի երկակի մեկնաբանությունները և Արցախին կվերադարձնի նրա անբաժան մասի իրավական կարգավիճակը:

Քանի որ գործ ունենք անցյալն ապագայի հետ կապող անցումային դարաշրջանի հետ, պատմության վտանգավոր գետի մի ափից մյուսն անցնելու համար նախ և առաջ պետք է դուրս գանք ներկայիս բույսի վիճակից: Կամրջի մի ափից մյուսը տեղափոխվող սովորական խոտի դերում մնալու պարագայում կարող ենք դառնալ իրենց հակաարևմտյան մտասևեռումին օրեցօր ավելի ու ավելի ռազմավարական բնույթ հաղորդող Ռուսաստանի ու Թուրքիայի ղեկավարների նոր գործարքի զոհը: Աշխարհաքաղաքական ծուղակի մեջ հայտնված այս «անփոխարինելի գործընկերները» գնալով ավելի ու ավելի անկանխատեսելի են դառնում, ուստի առաջիկա ամիսներին մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած անակնկալի...

WAYS TO SAVE ARTSAKH

Key words - Artsakh, new order, two-faced Janus, hostage, someone else's hangover, wolf, ram, hay, Kaufman model, Armenian question, constitutional reforms.

Edit.

ПУТИ СПАСЕНИЯ АРЦАХА

Ключевые слова - Арцах, новый порядок, двуликий Янус, заложник, чужое похмелье, волк, баран, сено, модель Кауфмана, Армянский вопрос, конституционные реформы.

Ред.